ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «22» 03 2017թ. № 214-Ա

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ (ՄՄ) ՄԻ ՇԱՐՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 28 որոշմամբ հաստատված կարգի քսանիններորդ պարբերությունը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 53 որոշման 1-ին կետի ա) ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հունիսի 20-ի «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մի շարք տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» №580-Ա հրամանը և հրամանով հաստատված վկայականը՝ Ն-03(Հ-03)2014:

2. Սահմանել, որ Ն-03(Հ-03)2014 վկայականով հաստատված տեխնիկական կանոնակարգերի պահանջներին (բացառությամբ ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի) համապատասխանության գնահատման տրված փաստաթղթերը վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի հունվարի 2-ը:
3. Սահմանել, որ Ն-03(Հ-03)2014 վկայականով հաստատված ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման տրված փաստաթղթերը վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը:
4. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի №1 հավելվածում նշված ԵԱՏՄ (ՄՄ) տեխնիկական կանոնակարգերի պահանջներով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:
5. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի №2 հավելվածում նշված ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջներով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:
6. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել 3 տարի ժամկետով, տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-03(Հ-03)2017:
7. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիան գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

/ ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված №1
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2017 թ.
Դեկտեմբեր 22-ի N 219-Ա հրամանի

ՑԱՆԿ

ԵԱՏՄ (ՄՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի N 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
2. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
3. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
4. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 15-ի N 34 որոշմամբ հաստատված «Մասնագիտացված սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժական և դիետիկ պրոֆիլակտիկ սննդի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
5. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
6. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի N 67 որոշմամբ հաստատված «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ

7. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 883 որոշմամբ հաստատված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
8. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 874 որոշմամբ հաստատված «Ցորենի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
9. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 797 որոշմամբ հաստատված «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
10. Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 799 որոշմամբ հաստատված «Օծանելիքի և կոսմետիկ արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
11. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ 008/2011 «Խաղալիքների անվտանգության մասին» թիվ 798 որոշում առ 23.09.2011թ.
12. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ 035/2014 «Ծխախոտային արտադրանքի անվտանգության մասին» թիվ 107 որոշում առ 12.11.2014թ.